## ԳԼՈՒԽ ՅՀԴ.

Ամենայն իշխան քաղաքաց ամենայն տարւոյ չորս անգամ արասցեն հանդէս և հրաւիրեսցեն նշանաւոր արք 'ի ճաշ, և արք և կանայք ընթրիս և կաքաւել.

մի Յունվարի 6 տօնի սրբոյ յայտնութեան ձմեռն.
մի . Տօնի սրբոյ յարութեան գարնան.
մի . Տօնի Վարդավառի 'ի ամառնան.
մի . Տօնի Սուրբ Խաչի 'ի աշնան.

Մինչ դեռ բազմեալ 'ի սեղանն ճաշի ուտել և ըմպել իւրաքանչիւրօք, որում ընութիւն իւր խոստանասցէ յետ ագենալուն հարկաւոր է յիշխան քաղաքին առնուլ բաժակ գինով 'ի ձեռս իւր և այց արասցէ բարձրաձայն հնչմամբ 'ի աջ և ձախ թև ընդ իւր բազմողաց ասելով այսինքն.

Առաջին անգամն բարի կեցութիւն ամենայն հայոց, և սմայ վառեսցեն շուրջ պարսպի եղեալ թօփերն.

Երկրորդ անգամն, երկայն կեանս նախարարին հայոց փրթանայ սմայ . 21 թօփ

Երրորդ անգամն, երկայն կեանս Հայրապետին հայոց տեառն Զաքարիէ և բոլոր Եպիսկոպոսաց . . . 19 թօփ

Չորրորդ անգամն, առատ պտղաբերութիւն անկոց հայաստանեաց . 17 թօփ

Հինգերորդ անգամն, սէր դրա-